



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 նոյեմբերի 2011 թվականի N 18-Ն

ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով.

Ավագանին որոշում է

Մարմարիկ համայնքի ավագանու 2010թ-ի դեկտեմբերի 25-ի «2011թ տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 34-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Ծախսային մասում.

Մարմարիկ համայնքի վարչական բյուջեի 11.1.2.51 ծրագրի, 4891 «Պահուստային միջոցներ» հոդվածից հատկացնել գումար.

1. 300.0 հազ. դրամ՝ սոցիալական հատուկ արտոնություններ 10.7.1.51 ծրագրի 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածին:
2. 100.0 հազ. դրամ ջրային տնտեսության 06.3.1.51 ծրագրի « շենքերի և շինանյութերի ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածին:
3. 120.0 հազ. դրամ «այլ մշակութային կազմակերպություններ» 08.2.4.51 ծրագրի 4239 հոդվածին.

Ավագանու անդամներ՝

Կողմ (S)	Դեմ ()	Ձեռնպահ ()
Կոմիտաս Հունանյան		
Կարեն Մելոյան		
Արմեն Ասատրյան		
Արմեն Սեփոյան		
Ռոման Հարությունյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ